# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2022 թվականի N 630 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱ-ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 2096-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Գույք հետ վերցնելու և գույք ամրացնելու, որպես բնաիրային օգնություն գույք տրամադրելու և գույք նվիրաբերելու մասին» N 2096-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» և «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված և դրանց գործառույթների իրականացման համար ոչ անհրաժեշտ գույքը հետ

վերցնել և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն NN 5.1 և 5.2 հավելվածների։».

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժա» պարբերությամբ.

«ժա. «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 15.1 հավելվածի.».

3) որոշման N 10 հավելվածի «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարման արդյունքում նախարարությանը ամրացված գույք» բաժնի, «Պաշարներ (այդ թվում՝ փոքրարժեք և արագամաշ նյութեր)» գլխի՝

ա. 15-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | 457 | | 328,868.00 | 0.00 |

»,

գ. «Ընդհանուրը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդհանուրը | | 1402 | | 49,945,896.00 | 21,633,786.05 |

».

4) որոշման N 17 հավելվածի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մահճակալ երկհարկանի | հատ | 17 | 36,568.00 | 621,656.00 | 78,491.32 |

»,

բ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | 184 | | 2,100,896.00 | 674,573.16 |

».

5) որոշման N 63 հավելվածի՝

ա. 1-ին կետի «Օդամաքրիչ խողովակ ճաշարանի» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Օդամաքրիչ խողովակ ճաշարանի | | | 1 | 92.00 | 90.08 | 1.92 | |

»,

բ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | | | 358.00 | 270.98 | 87.02 | 85.10 |

».

6) որոշման 10-րդ կետում «եռամսյա ժամկետում» բառերը փոխարինել «ութամսյա ժամկետում» բառերով.

7) որոշումը լրացնել նոր՝ NN 5.1, 5.2 և 15.1 հավելվածներով՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ